ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ
МЭРИЯ г. АЛАВЕРДИ
REPUBLIC OF ARMENIA REGION OF LORI
MUNICIPALITY OF ALAVERDI

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա
1702, Алаверди, З. Андраника 8А
1702, Alaverdi, Z. Andraniki 8A
☎ (253) 2-41-00
Fax (253) 2-41-00
E-mail: alaverdi@alaverdi.am
URL: www.alaverdi.am

№ 1182

«07» 12 2011թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.Լ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ է ուղարկվում Ալավերդի համայնքի ավագանու 2011թ. թիվ 47-Ա, թիվ 48-Ա, թիվ 49-Ն և Ալավերդու քաղաքապետի 2011թ. թիվ 285-Ա, թիվ 286-Ա, թիվ 287-Ա, թիվ 288-Ա, թիվ 289-Ա, թիվ 290-Ա, թիվ 291-Ն որոշումները:

Առդիր՝ 10 էջ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

Կատ.՝ Ա. Էվոյան
2-41-02

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 49-Ն
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06.12.2011թ. ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ալավերդի համայնքի 2012 թվականի բյուջեն
հաստատելու մասին

(Զեկ.՝ Ա. ՎԱՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ և 55-րդ հոդվածներով, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ալավերդի համայնքի 2012 թվականի բյուջեն
   ա/ եկամուտների գծով - 376117.0 հազ. դրամ
   բ/ ծախսերի գծով - 372205.0 հազ. դրամ
   գ/ հավելուրդի գծով - 3912.0 հազ. դրամ
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների (հատված 1):
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական դասակարգման (հատված 2):
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման (հատված 3):
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդ) (հատված 4):
6. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները (հատված 5):
7. Հաստատել բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման (հատված 6):
8. Ծախսերի ֆինանսավորումը կատարել ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:
9. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն թույլատրել համայնքի ղեկավարին կատարել ծախսային հոդվածների հաստատված ծավալի 15% չգերազանցող վերաբաշխումները:
10. Սոցիալական պաշտպանության բնագավառի ծախսերը կատարել համայնքի ղեկավարի կարգադրությունների համաձայն և կանխիկ դրամի վճարումը կատարել քաղաքապետարանի դրամարկղի միջոցով:

Որոշումն ընդունվել է.

1.	ԱԲԵԼՅԱՆ	ՄԵՐՈՒԺԱՆ	5.	ՃՈՒՂՈՒՐՅԱՆ	ՀԱԿՈԲ
2.	ԵՐԻՑՅԱՆ	ԿԱՄՈ	6.	ՄԻՐԶՈՅԱՆ	ՌՈՒԶԱՆՆԱ
3.	ԷՎՈՅԱՆ	ԳԱԳԻԿ	7.	ՍԱՐԳՍՅԱՆ	ՀՐԱՆՏ
4.	ԹԱՆԴԻԼՅԱՆ	ՀՐԱՉՅԱ	8.	ՎԱՐՈՍՅԱՆ	ԿԱՄՈ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Վ. ԷՎՈՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 48-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06.12.2011թ. ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ալավերդու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2012 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և դրույքաչափերը հաստատելու մասին

(Զեկ.՝ Ա. ՎԱՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, 28-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ալավերդու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2012 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և դրույքաչափերը (հավելված 1-14):
2. Որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 01-ից: Որոշման ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Ալավերդու քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 34-Ա որոշումը:

Որոշումն ընդունվել է.

1. ԱԲԵԼՅԱՆ	ՄԵՐՈՒԺԱՆ		5. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ	ՀԱԿՈԲ	
2. ԵՐԻՑՅԱՆ	ԿԱՄՈ		6. ՄԻՐԶՈՅԱՆ	ՌՈՒԶԱՆՆԱ	
3. ԷՎՈՅԱՆ	ԳԱԳԻԿ		7. ՍԱՐԳՍՅԱՆ	ՀՐԱՆՏ	
4. ԹԱՆԴԻԼՅԱՆ	ՀՐԱՉՅԱ		8. ՎԱՐՈՍՅԱՆ	ԿԱՄՈ	

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Վ. ԷՎՈՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 47-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06.12.2011թ. ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ալավերդի համայնքի ղեկավարի աշխատակազմի 2012 թվականի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

(Զեկ.՝ Ա. ՎԱՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ալավերդու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի 2012 թվականի կառուցվածքը համաձայն հավելված N 1-ի:
2. Հաստատել Ալավերդու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի 2012 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված N 2-ի:
3. Մեկ շաբաթյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնին Ալավերդու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու համար:
4. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդու քաղաքային համայնքի ավագանու 2011թ. սեպտեմբերի 27-ի թիվ 33-Ա որոշումը:
5. Սույն որոշման 1-ին, 2-րդ և 4-րդ կետերն ուժի մեջ են մտնում Ալավերդի համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Որոշումն ընդունվել է.

1. ԱԲԵԼՅԱՆ	ՄԵՐՈՒԺԱՆ		5. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ	ՀԱԿՈԲ	
2. ԵՐԻՑՅԱՆ	ԿԱՄՈ		6. ՄԻՐԶՈՅԱՆ	ՌՈՒԶԱՆՆԱ	
3. ԷՎՈՅԱՆ	ԳԱԳԻԿ		7. ՍԱՐԳՍՅԱՆ	ՀՐԱՆՏ	
4. ԹԱՆԴԻԼՅԱՆ	ՀՐԱՉՅԱ		8. ՎԱՐՈՍՅԱՆ	ԿԱՄՈ	

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Վ. ԷՎՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 291-Ն

05 դեկտեմբերի 2011թ.

Ալավերդու քաղաքային համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների կանոնադրություններում փոփոխություններ կատարելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Ալավերդու քաղաքային համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն», «Ալավերդու քաղաքային համայնքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն», «Ալավերդու քաղաքային համայնքի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն», «Ալավերդու քաղաքային համայնքի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն», «Ալավերդու քաղաքային համայնքի թիվ 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն» և «Ալավերդու քաղաքային համայնքի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ-ի) կանոնադրություններից հանել 3.8 և 3.13 կետերը:
2. Հանձնարարել ՀՈԱԿ-երի տնօրեններին՝ սահմանված կարգով կատարելու կանոնադրությունների փոփոխությունների պետական գրանցման աշխատանքները:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի

05.12.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 290-Ա

02 դեկտեմբերի 2011թ.

Համայնքային սեփականություն
ճանաչված առևտրի սրահը և նրա
զբաղեցրած հողամասը օտարելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. № 912-Ն որոշման 34-րդ, 47-րդ կետերով և հաշվի առնելով, որ Սամվել Աբգարյանը ընդունել է առևտրի սրահը և նրա զբաղեցրած հողամասը ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը և վճարել է օրինականացման համար սահմանված վճարները

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ալավերդի քաղաքի Զորավար Անդրանիկ փողոց թիվ 325 Բ հասցեում գտնվող քաղաքապետի 30.09.2011թ. թիվ 224-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված 10.52 քմ մակերեսով առևտրի սրահը՝ 104148.0 (հարյուր չորս հազար հարյուր քառասունութ) դրամ և նրա զբաղեցրած 10.52 քմ հողամասը՝ 8521 (ութ հազար հինգ հարյուր քսանմեկ) դրամ արժեքով ուղղակի վաճառքով օտարել Սամվել Աբգարյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում առևտրի սրահի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

Հիմք՝ Քաղաքապետի 30.09.2011թ. թիվ 224-Ա և 07.11.2011թ. թիվ 261-Ա որոշումները, վճարման անդորրագրերը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
02.12.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 289-Ա

02 դեկտեմբերի 2011թ.

Համայնքային սեփականություն
ճանաչված առևտրի սրահը և նրա
զբաղեցրած հողամասը օտարելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. № 912-Ն որոշման 34-րդ, 47-րդ կետերով և հաշվի առնելով, որ Սամվել Աբգարյանը ընդունել է առևտրի սրահը և նրա զբաղեցրած հողամասը ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը և վճարել է օրինականացման համար սահմանված վճարները

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ալավերդի քաղաքի Ջրավազան փողոց թիվ 3 Գ հասցեում գտնվող քաղաքապետի 30.09.2011թ. թիվ 223-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված 15.39 քմ մակերեսով առևտրի սրահը՝ 152361.0 (հարյուր հիսուներկու հազար երեք հարյուր վաթսունմեկ) դրամ և նրա զբաղեցրած 15.39 քմ հողամասը՝ 12466 (տասներկու հազար չորս հարյուր վաթսունվեց դրամ արժեքով ուղղակի վաճառքով օտարել Սամվել Աբգարյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում առևտրի սրահի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

Հիմք՝ Քաղաքապետի 30.09.2011թ. թիվ 223-Ա և 31.10.2011թ. թիվ 256-Ա որոշումները, վճարման անդորրագրերը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
02.12.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 288-Ա

02 դեկտեմբերի 2011թ.

Հողամասերը համայնքային
սեփականություն ճանաչելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և ՀՀ «Հողային օրենսգրքի» 101-րդ հոդվածի դրույթներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Գառնիկ Վերանյանին (մահացած), Անահիտ Վերանյանին, Կարեն Վերանյանին, Կարինե Վերանյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.0859 հա պտղատու այգին (ծածկագիր 06-002-366-000141, սեփականության վկայական՝ 1216010, տրված 31.10.2006թ.), 0.0882 հա վարելահողը (ծածկագիր 06-002-361-000007, սեփականության վկայական՝ 2258808, տրված 31.10.2006թ.) և 0.1617 հա վարելահողը (ծածկագիր 06-002-248-000025, սեփականության վկայական՝ 1196478, տրված 31.10.2006թ.), ճանաչել համայնքային սեփականություն:
2. Հանձնարարել քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գագիկ Սոխակյանին կատարելու սույն որոշումից բխող պետական գրանցման աշխատանքները:

Հիմք՝ Անահիտ Վերանյանի, Կարեն Վերանյանի, Կարինե Վերանյանի հողամասերից հրաժարվելու մասին համատեղ դիմումը, անձնագրերի պատճենները, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
02.12.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 287-Ա

02 դեկտեմբերի 2011թ.

Բնակելի տան օրինական 342.0 քմ տնամերձ հողամասին կից ավել օգտագործվող 234.0 քմ սահմանազատված հողամասը և ինքնակամ կառուցված շինությունները օրենքի ուժով Կառլեն Մելիքսեթյանի սեփականությունը համարելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 12.08.2010թ. N 1004-Ն որոշումով և հաշվի առնելով, որ նշված հողամասը չի գտնվում ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ալավերդի քաղաքի Էնգելս թաղամասի թիվ 108 հասցեում գտնվող՝ Կառլեն Արմենակի Մելիքսեթյանի (ծնված 28.09.1937թ.) սեփականության իրավունքով պատկանող 342.0 քմ օրինական տնամերձ հողամասում բնակելի տանը կից՝ 1975թ. ինքնակամ կառուցված բնակելի տունը, ավտոտնակը, սանհանգույցը, ինչպես նաև օրինական հողամասին կից ավել օգտագործվող 234.0 քմ մակերեսով սահմանազատված հողամասը օրենքի ուժով համարել Կ. Մելիքսեթյանի սեփականությունը՝ որպես սեփական գույք:
2. Նշված սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:

Հիմք՝ Կ. Մելիքսեթյանի դիմումը, ԱԳԿՊԿ Ալավերդու տարածքային ստորաբաժանման ղեկավարի 28.10.2011թ. թիվ ԴԹ-3078 գրությունը, «Թիվ 1ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
02.12.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 286-Ա

02 դեկտեմբերի 2011թ.

Վարձակալի փոփոխման վերաբերյալ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 674-րդ հոդվածներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Սանահին Սարահարթի 2/28 շենքի հմ. 24 բնակարանի վարձակալ ճանաչել Մարատ Մովսեսի Բարսեղյանին:

Հիմք՝ Մ. Բարսեղյանի դիմումը, 14.08.1978թ. N 125 միասնական օրդերը, նախկին վարձակալի 29.07.2008թ. ԱԱ N 136435 մահվան վկայականը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի

02.12.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 285-Ա

02 դեկտեմբերի 2011թ.

Ալավերդի քաղաքի ՔՊ ծառայություններ
ստեղծելու վերաբերյալ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և ելնելով քաղաքապետարանի նոր աշխատակազմի ձևավորման հանգամանքներից

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ալավերդի քաղաքի ԱԻ մշտական գործող հանձնաժողովի կազմում կատարել համապատասխան փոփոխություններ (նոր կազմը կցվում է):
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ԱԻ և ՔՊ շտաբի պետ Զավեն Շահմուրադյանի վրա:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
02.12.2011թ.